



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

27.05.2014թ. N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Հանրապետության տոնի առթիվ:

Մայիսյան հաղթական տոնացույցի խորախորհուրդ շարքն ամփոփող և ամբողջացնող այս կարևորագույն տոնի առթիվ միմյանց ուղղված բոլոր մաղթանքներին զուգահեռ անհրաժեշտ է հերթական անգամ բարձրաձայնել հայ ոգու և հայ տեսակի ուրույն բնորոշումները, շնորհիվ որոնց կերտվել են մեր հերոսական պատմության նվիրական էջերը՝ ներառելով այսպիսի առանցքային շատ տոներ:

Հանրապետության տոնն, իրավամբ, լավագույն առիթ ու հնարավորություն է կրկին փառաբանելու իր պատմության բոլոր էտապներում հայրենի պետականության ձգտող, ազատ ու անկախ հայրենիք ունենալու գաղափարը մշտապես կրող մեր ժողովրդին:

Համոզված եմ, որ հարավոփոխ աշխարհում հայ ազգն իր անկախ պետականությունը պահպանել, պահպանում ու պահպանելու է բացառապես իր միասնականության և հայրենիքի նկատմամբ ունեցած սիրո շնորհիվ:

Դարձյալ շնորհավորում եմ այս յուրահատուկ տոնի կապակցությամբ և ցանկանում, որ այսուհետ ևս մեր նորօրյա պատմության էջերում ամրագրվեն նորովի ձեռքբերումներ ու հաղթական հաջողություններ:

Հարգանքներով

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ